## ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մարմարաշենի Մարմարիկ մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ հոգեբան-մանկավարժի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարություն

05.04.2022

Հայտատու` ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մարմարաշենի Մարմարիկ մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ.-ի փետրվարի 17-ի թիվ 08-Ն հրամանի 2-րդ կետ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մարմարաշենի Մարմարիկ մ/մանկապարտեզ ՀՈԱԿ հոգեբան-մանկավարժի թափուր պաշտոնը (0.5 դրույքով) զբաղեցնելու համար անցկացվում է մրցույթ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը: բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն հոգեբանի որակավորմամբ:

1. Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում`

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար` 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները` Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական

կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ,բնօրինակները՝ վերադարձնում:

14.Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝

1)դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ,որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.

4)դատապարտվել է հանցագործության համար,և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,բացառությամբ այն դեպքերի,երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝

1.թեստավորում

2.հարցազրույց

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձնամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 03.05.2022թ. ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա 05.05.2022թ.-ին ժամը 11:00-ին ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնք Մարմարաշեն Երևան -Արտաշատ խճ.63

Հեռ.077-375-380 Հակոբյան Լիա
Էլ.Փոստ.hakobyan55.55@mail.ru